

Թամար Հայրապետյան
բանասիրական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ,

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԱԿԱՆՈՍ ՊԸԼ ՊՈՒՂԻՆ
(Ըստ 1991-2015թթ. Արցախում գրատած նյութերի)

Պըլ Պուղու զվարճապատումների ծագման հայրենիքը Արցախի պատմաազգագրական շրջանն է, մասնավորապես Պատմական Վարանդա գավառի մելիքությունը՝ իշխանանիստ Ավետարանոց (Չանախչի) բերդավանով, որտեղից առակախոս Պուղու համբավը բանավոր կենցաղավարմամբ տարածվել է տեղական սահմաններից դուրս, հասել Մյունիք, իսկ ավելի ուշ՝ Բջնան ու Արարատյան դաշտավայր: Պուղին ունի մականուն՝ Պել (խենթ, ծուռ), ինչն էլ վկայում է նրա բանահյուսական բնավորության մասին:

Մակար վարդապետ Բարխուդարյանցի հաղորդմամբ՝ Պըլ Պուղին եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնագար Բ-ի զվարճախոս-կատակաբանը:

Պըլ Պուղին մելիքների ապարանքում եղել է ավելին, քան սովորական պալատական ծաղրածուն: «Նա գրավել է մի դիրք, որը կարելի է կոչել զվարճախոս-խորհրդատու»: Նա առակախոս էր, կրնկի վրա սուր խոսք հորինող, հնարամիտ ու արդարադատ: Պըլ Պուղին իր ժամանակի որոշակի սոցիալական, կրոնական, քաղաքական գաղափարների կրողն է և իբրև երգիծական կերպար բացահայտվում է անսպասելի իրավիճակներում: Պըլ Պուղի-Մելիք-Շահնագար գույգի փոխհարաբերությունը խաղարկվում է տեր և ծառա, սոյլալ դեպքում՝ իշխանավոր և ծաղրածու մակարդակով: Երկու կողմերն էլ, չնայած մշտական հակամարտությանը, գտնվում են անբաժան միասնության մեջ: Պըլ Պուղին ոչ միայն չի քծնում Մելիք-Շահնագարին, այլև իր հնարախոսություններով հաճախ սաղորդում է նրան՝ դրդելով հիմար արարքների, որպեսզի, ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում հայտնվելու վտանգից խուսափելով, տերը փորձի կանգնել ճիշտ ուղու վրա:

Պըլ Պուղու զվարճապատումները, փոխանցվելով սերնդեսերունդ, ձևավորել են արցախահայության վարքային համալիրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս սփռելով XVIII դարի երկրորդ կեսերից մինչև XIX-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում արցախահայության սոցիալ-քաղաքական

հարաբերությունների և պատմամշակութային իրողությունների վրա:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, հումոր, սուր երգիծանք, առակախոս, սոցիալ,

Tamar Hayrapetyan,
Doctor of Philological Sciences,
Erevan State University, The Institute of Archaeology and Ethnography of
National Academy of Sciences of Armenia

KARABAKH JESTER PELE PUGHI
(based on Material collected in Artsakh in 1991-2015)

Funny stories of Pele Pughy originated in Avetaranots (Chanakhchi) the capital of Varanda – one of melikdoms of Historical Artsagh. The fame of Pele Pughy spread orally by a word of mouth beyond the borders of his native land and reached Syunik, later Ijevan and Ararat valley. Pughy had a nickname – Pele, meaning mad, crazy, which proves the comical nature of his folk character. According to records of Makar vardapet Barkhudaryants, Pele Pughy was a jester of Melik Shahnazar the Second, the ruler of Varanda.

In court Pele Pughy was more than a mere jester. He occupied a position of jester-advisor. He was humorous, ready to put a witty remark on the spot, honest and fair. Pele Pughy carries certain social, religious and political views of the time. His satirical character is revealed in unpredictable situations. The relationship of Pele Pughy and Melik Shahnazar is similar to that of master and servant, in this case on the level of ruler and jester. Their union is indivisible though they are constantly having conflicts.

He doesn't flatter Melik Shahnazar, moreover, with his witty remarks he tries to direct him, showing the truth and the right path.

Passing from generation to generation funny stories and anecdotes of Pele Pughy shape satire as a constituent part of behavior of Artsakh Armenians. These stories shed light on social and political relations of Artsakh Armenians and represent historical and cultural facts of Artsakh in the XVIII – XIX centuries.

Key words: folklore, humour, satire, jester, social, political, fable

Тамар Айрапетян,

Доктор филологических наук,

**Ереванский Государственный Университет, Институт Археологии и Этнографии Национальной академии наук
Республики Армении**

КАРАБАХСКИЙ БАЛАГУР ПЫЛ-ПУГИ
(согласно собранным в Арцахе в 1991-2015 гг. материалам)

Историко-этнографическая родина забавных историй и анекдотов Пыл-Пуги – Арцах, точнее Варандское меликство, резиденция князей Аветараноц (Чанахчи). Отсюда слава Пуги вышла за пределы родной местности и достигла Сюника, а позднее Иджевана и Араратской долины. У Пуги было прозвище Пыл – означающее сумасшедший, что и свидетельствует о его народном характере. Согласно сообщениям вардапета Макара Бархударяна, Пыл-Пуги был балагуром князя Варанды Мелика Шахназара.

При дворе Пыл-Пуги был не только балагуром, но и советником. Он слыл смельчаком-острословом, позволяя себе хитро и изобретательно высмеивать недостатки и пороки власть имущих. Он является носителем определенных социальных, религиозных и политических взглядов и его сатирический образ раскрывается в самых непредсказуемых ситуациях. Отношения Пыл-Пуги – Мелик Шахназар обыгрываются на уровне отношений хозяина и слуги, в данном случае властителя и балагура. Несмотря на постоянный конфликт и противостояние они нераздельны и представляют единое целое. Пыл-Пуги не только не льстит мелику, а своей критикой и острословием пытается открыть ему глаза и указать путь истины.

Передаваясь из поколения в поколение, сатира Пыл-Пуги является важной составной частью национального мышления армян Арцаха. Данный фактор проливает новый свет на социальные и политические отношения с одной стороны, а с другой на историко-культурные факты Арцаха конца XVIII начала XIX вв.

Ключевые слова: фольклор, юмор, сатира, балагур, социальный, политический, басня

1878 թվականին Թիֆլիսում լույս տեսած Գալուստ Շերմազանյանի 198 էջանոց «Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր և առակներ՝ մեծ մասամբ ազգային կյանքից առած» վերնագրով ժողովածուում ընթերցողն առաջին անգամ ծանոթանում է Պըլ Պուղու տասնհինգ միավոր առակ-զվարճապատումներին:

1883 թվականին Մակար Բարխուդարյանցը Թիֆլիսում հրատարակում է 189 զվարճապատումից բաղկացած «Պըլ-Պուղի» գիրքը, որտեղ զվարճախոսը հանրությանն է ներկայանում դարաբաղի ծերունիների հիշողության ծալքերում պահպանված իր համառոտ կենսագրական տվյալներով և իրական-պատմական դեմքով: Հետագայում նույնպես Պըլ Պուղին շարունակել է մնալ հայ բանահավաքների տեսադաշտում (Մարգիս Իսրայելյան, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյան, Սերո Խանգաղյան, Արտաշես Նազիկյան, Ալվարդ Ղազիյան, Լևոն Հարությունյան և այլոք): Տպագրվել են նաև Պըլ Պուղու նյութերի վերապատումներ, թարգմանություններ ու գրական մշակումներ:

Պըլ Պուղու նկատմամբ շարունակվող հետաքրքրությունը բացատրվում է նրա երգիծապատումներում առկա արցախահայության սոցիալ-կենցաղային, հանրային-քաղաքական հարաբերությունների՝ մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով:

Հողվածի մեջ ուսումնասիրված դեպքերի և իրադարձությունների երգիծական արձագանքները բացահայտվել են ընդհանուր ու հայ բանագիտության մեջ ընդունված և կիրառվող պատմահամեմատական ու կառուցվածքաբանական մեթոդներով՝ հրնթացս լուսաբանելով և գիտական շրջանառության մեջ դնելով Անկախության տարիներին Արցախում Պըլ Պուղու անվան շուրջը կենցաղավարող և մեր կողմից գրառված դաշտային բանահյուսական նյութերը:

Պըլ Պուղու զվարճապատումների ծագման հայրենիքը Արցախ պատմաազգագրական շրջանն է, մասնավորապես Պատմական Վարանդա գավառի մելիքությունը՝ իշխանանիստ Ավետարանոց (Չանախչի) բերդավանով, որտեղից առակախոս Պուղու համբավը բանավոր կենցաղավարմամբ տարածվել է տեղական սահմաններից դուրս, հասել Սյունիք, իսկ ավելի ուշ՝ Իջևան ու Արարատյան դաշտավայր: Պուղին ունի մականուն՝ Պել (խենթ, ծուռ), և ինչպես իր բանահյուսական կրկնակները՝ Պուղոց Մուկուչը՝ Շիրակում, Հոբոսը՝ Լոռիում, քեռի Գինոսը՝ Ղափանում ներկայացնում են Հայաստանի տարբեր շրջաններ բնակչության հավաքական նկարագիրը: Որոշ շրջաններում ծությունը հատկապես դրսևորում է մասնավոր-տեղական բնույթ, գործինակ՝ Շատախում՝ կաճետա ծոերը, Գուգարքում՝ կուրթանցիները, Արցախում՝ շաշ հաթերքցիները: Ի դեպ, այստեղ շաշը պետք է հասկանալ ոչ թե շիլ, այլ ծուռ իմաստով:

Մակար վարդապետ Բարխուդարյանցի հաղորդմամբ՝ Պըլ Պուղին եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազար Բ-ի զվարճախոս-կատակաբանը (Պըլը-Պուղի 1883, Գ): «Ըստ իմ կարծեաց Պուղու պարզ առակներն, գուարճաբանություններն եւ սրախոսություններն հայի համար ավելի արժէք ունին, քան թէ Եգոպոսին, Նասրաաղին Հօճային, Տանթէին, Քրիլովին եւ Լաֆօնտէին, որովհետև հայկական կեանքից բխած լինելով՝ աւելի յարմար են հայկական սովորութեանց, հայկական բնատրութեանց, հայկական առտնին ընտանեկան կենաց, վարուց եւ բարուց» (Պըլը-Պուղի 1883, Գ): Մելիք-Շահնազար Բ-ը, ըստ էության, իբրև ռազմավարչական կազմավորման գլուխ կանգնած միանձնյա իշխանապետական իրավունքներ ունեցող մարդ, պետք է աչքի ընկներ քաղաքական-դիվանագիտական լայնախոհ գործունեությամբ, սակայն նա Արցախում գերագահություն նվաճելու նպատակով դաշնակցել է վաչկատուն սարըջալի ցեղի զլխավոր Փանահի հետ, ով դավաճան հայ իշխանի աջակցությամբ, իր իսկ տոհմական

պատմիչի վկայությամբ՝ (Мирза-Аджигезаль-Бек 1950:55-56) իրեն հայտարարել է Ղարաբաղի խան և թշնամական քաղաքականություն վարել Արցախի ու հարևան գավառների հայության նկատմամբ:

Փանահի իշխանության ձևավորման շրջանում Մելիք-Շահնագարը նյութապես սատարում է նրան: Ասում են, մի անգամ, դեռ Փանահ խանի իշխանության սկզբում Մելիք-Շահնագարը նրան ասում է. «Բնչու՞ ես մտահոգվում, յոթ տարի է, քո բանակը ընտիր աշորայով եմ պահում» (Միրզա Յուսուֆ Ներսեսով 2000, 42): Ավելին, Մելիք-Շահնագարն իր դիրքերն ամրապնդելու նպատակով դատերը՝ Հուրգաղին, կնության է տալիս Փանահի որդի Իբրահիմ խանին (Նույն տեղում):

Զվարճապատումներից մեկի համաձայն՝ Մելիք-Շահնագարը, դատեր՝ Հուրգաղի կամքին հակառակ, նրան ամուսնացնում է Իբրահիմ խանի հետ: Հուրգաղն էլ չի հնազանդվում ամուսնուն, ծուլանում է տուն ու տեղի, կենցաղի կազմակերպման հարցերի մեջ: Այս ամենից մտահոգ՝ Մելիք-Շահնագարը հանձնարարում է Պըլ Պուղին, որ իր համար ու անբան աղջկան հարսնություն անել սովորեցին: Պուղին երկար նայում է Մելիք-Շահնագարին ու հանդիմանանքով ասում. «Մելիքն ապրած կենա, այնքալ ախճիկըտ շատ էլ դուր ա անում է՛, ուրան իւելը հու քու իւելքատ չի, վեր էտ շներին ծառայի, էշին էշում ա, կյարին քըցում» (Հայրապետյան 1999, 23):

Տարիներ անց, քաղելով իր անհեռատես արարքների պտուղները, Շահնագար Բ-ը զոջացել է, փորձել հաշտվել հայ մելիքների հետ, սակայն ժողովուրդը չի ներել նրան՝ ստիպելով, որ դավաճանի մեղսավոր արարքների հետևանքները ուղեկցեն նրան իր երկարատև կյանքի ընթացքում:

Մի անգամ Մելիքը հարցնում է Պուղին, թե մարդու տունը ինչի՞ց է քանդվում: –Ներսի թշնամուց, պատասխանում է Պըլ Պուղին (Հայրապետյան 2015, 8):

Պըլ Պուղին մելիքների ապարանքում եղել է ավելին, քան սովորական պալատական ծաղրածուն: «Նա գրավել է մի դիրք, որը կարելի է կոչել զվարճախոս-խորհրդատու» (Ղազիյան 1978, 61):

Պըլ Պուղին առակախոս էր, կրնկի վրա սուր խոսք հորինող, հնարամիտ ու արդարադատ:

Պըլ Պուղի-Մելիք-Շահնագար զույգի (բանահյուսական միջազգային դիպաշարերում՝ Փախլուլ-Հարուն ալ-Ռաշիդ, Աբու-Նուվաս-Խալիֆ, Մուլլա-Թիմուր, Բիրբալ-Փաղիշահ Ակբար) փոխհարաբերությունը խաղարկվում է տեր և ծառա, տվյալ դեպքում՝ իշխանավոր և ծաղրածու մակարդակով: Երկու կողմերն էլ, չնայած մշտական հակամարտությանը, գտնվում են անբաժան միասնության մեջ, ճիշտ այնպես, ինչպես լարախաղացն ու ծաղրածուն: Բայց եթե ներկայացման մեջ ծաղրածուն աստիճանաբար դառնում է պատրաստակամ, հլու-հնազանդ ծառա, ոգևորություն խաղում, հիանում իր տիրոջով, ապա Պըլ Պուղին ոչ միայն չի քծնում Մելիք-Շահնագարին, այլև իր հնարախոսություններով հաճախ սաղորդում է նրան՝ դրդելով հիմար արարքների, որպեսզի, ծիծաղաշարժ ու անբնական իրավիճակներում հայտնվելու վտանգից խուսափելով, տերը փորձի կանգնել ճիշտ ուղու վրա. «Մեհեստ Մելիք-Շահնագարը Պուղուն ասում ա, էտ դուր ա՞, վեր պտուղը ծառան հեռու չի ընգնում: Պուղին մտածում ա, մտածում, ասում՝ չէ:

–Յանի, հունց չէ,- առարկում է Մելիքը:

–Չէ, լի՛,- պատասխանում է Պուղին, վեր դուր ինի տու քու լյուսահոքի հորդ թթի ծառին տակին կընիր վեր ընգած, վեչ թա Փանահին բաստանումը» (Հայրապետյան 1999, 11):

Դժվար չէ եզրակացնել, որ այս զվարճապատման մեջ Պուղին նկատի ունի Մելիք-Շահնագարի հայր Մելիք-Հուսեյնին, ով իբրև Վարանդայի ներքին կյանքի կազմակերպման ու կառավարման բոլոր հատկանիշներով օժտված օրինակելի մելիք, ի հակակշիռ Մելիք-Շահնագարի, սրբորեն էր պաշտպանում իր հողի, տիրույթի սեփականության ժառանգական իրավունքն ու ազգի ընդհանրական շահերը, հոգում իր երկրի շենացման մասին:

Ասվածի վառ օրինակն է 133 տարի առաջ Պըլ Պուղու՝ ավելի քան բաց տեքստով ազդարարած հանդիմանությունը՝ ուղղված Մելիքի արժոատապաշտությանն ու քաղաքական հավկուրությանը.

«–Մելի՛ք, դիւ մինակ մլըքութիւնը պիպնելու երբայ ըս մտծես: Հայոց Ազգը պիպնելու երբայ իսկի մտծես չըս» (Պըլը-Պուղի 1883,121):

Միջնադարյան արաբական գրականության մեջ վեզիրը մեծ մասամբ ներկայանում է որպես իմաստուն խորհրդատու, ով ուրիշներին խելք ու խրատ է տալիս՝ տարբեր կարճ պատմություններ պատմելով: Հետաքրքիր է նկատել, որ եթե Բաղդադի խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը ստորացնում էր մինչև իսկ իր վեզիր Ջաֆարին, ով խալիֆի անխոհեմ որոշումներին չափազանց երկչոտորեն էր ընդդիմանում (Դերքարժ 1984: 405), ապա դասային արտոնություններից զուրկ Պըլ Պուղին, մեղքերը քավել փորձող Մելիք-Շահնագարին համարձակորեն խարազանում է՝ Արցախում և նրա սահմանները դուրս շրջանառվող սրախոսություններով: Որոշ զվարճապատումներում Պըլ Պուղին սաստում է անգամ պարսից շահին, քանի որ 18-րդ դարի կեսերին Պարսկաստանն ապրում էր ներքին ու արտաքին քաղաքական ծանր ժամանակներ, և շահն ի վիճակի չէր տերության ծայրամասերում՝ անդրկովկասյան ու մերձկասպյան տարածքներում, սանձել Թուրքիային ու Ռուսաստանին՝ ամուր պահելու իր իշխանությունը, ինչն էլ հայերի համար ստեղծում էր ծանր վիճակ:

Զվարճապատումներում Պըլ Պուղին հաճախ հանդես է գալիս իբրև միջնադարյան դատավորի թատերախաղային արքետիպ՝ «Դատ-բեդադ անողի», «Շառ կտորողի» կերպարով:

Մի անգամ Մելիք-Շահնագարն ու Պըլ Պուղին հյուրընկալվում են Պարսկաստանում: Նաղիր շահի նվեր տված ձիուն գիշերը գողանում են: Շահը Պըլ Պուղուն մեղադրում է գիշերը քնելու և ձիուն չհսկելու համար: «Ես գիդացալ

չըմ, վեր շահն էլ Մելիքին նման մուշ-մուշ քոն իլած ա, թա չէ գյարթուն կը մնայի»,- պատասխանում է Պուղին: (Հայրապետյան 2015, 12):

Բանահյուսական գրառումների համաձայն՝ Պըլ Պուղին սոցիալական կերպար է՝ իր պարզ կենցաղավարությամբ, նրա ողջ ունեցվածքը տեղավորում է մի խուրջինում (Շերմազանյան 1878,189), գրաճանաչ չլինելու հանգամանքով, սակայն նրա զվարճապատումները իրենց մեջ առաքինության ու ժողովրդական շրջահայեցողության դասեր են պարունակում:

Մելիք-Շահնագարը գնում է հարևան գյուղ և պատվիրում Պուղուն երկու օրից իրեն ետ բերել: Երկու օր հետո, երբ Պուղին կանգնում է դարպասի մոտ և կանչում Մելիքին, տանտիրոջ շունը հաչոցով հարձակվում է Պըլ Պուղու վրա: Մելիքը ներսից գոռում է.

–Պուղի, հինչը՞ ս լըղաճաք իլալ, գյուղու՞մ չըս վեր հաչան շոնը կժան չի նիլ:

–Մելիքն ապրած կենա,- պատասխանում է Պուղին, - ես գյուղում ըմ է՛, ամմա գյուղում չըմ, շոնը գյուղում ա՛, թա չէ (Հայրապետյան 1999, 22):

Սակար Բարխուդարյանցը 1883 թվականին Թիֆլիսում հրատարակած «Պըլը- Պուղի» գրքի առաջաբանում անդրադառնում է հին ժամանակների կայսրերին, թագավորներին, շահերին, խալիֆներին զվարճացնող ծաղրախոսներին, որոնց շնորհիվ պետական այրերը թեթևանում էին դատավճիռների ծանրությունից ու բացասական հույզերից, և «երբեմն նոցա պաշտօնական անդառնալի մահավճիռներն անգամ կը փոխուէին և յանցատրք կ'ազատուէին կախաղանի և քստրանքի դատապարտութիւնից» (Պըլը-Պուղի 1883, Գ): Այսպէս Մ. Բարխուդարյանցը զվարճաբանությունը արժևորում է իբրև կյանքի կանոնակարգվածությամբ պայմանավորված հուզական լարվածության լիցքաթափման միջոց՝ ընդգծելով հատկապես զվարճախոսության դերը քաղաքական մշակույթի մեջ. «Հարկ չը կայ ասել, թէ քաղաքական աշխարհն արդէն ընդունած է զուարճաբանութիւնը իբրև կյանքի օգտակար միջոցներից մին...» (Պըլը-Պուղի 1883, Գ):

Պըլ Պուղու քաղաքական վարքագիծն արտահայտված է ոչ միայն նրա զվարճապատումներում, այլև Ա. Բեկնագարյանցի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքում, որտեղ Շեյթան Թունին անձամբ պատմում է, թե ինչպես Պըլ Պուղու օժանդակությամբ իրեն հաջողվել է Մելիք-Շահնագար Բ-ի անվան և հագուստի մեջ ծալված ներկա գտնվել երկու ճրտերի¹ (անօրեն, օտար, շինծու)՝ Իբրահիմ խանի և Բարայել կաթողիկոսի գաղտնի խորհրդակցությանը, որտեղ ընթերցվում է Իբրահիմ խանի բարեկամ Ջաֆար-բեկի՝ Գանձակից ուղարկած նամակը. «Բսկ Շեյթանն պատմեց թէ ինքն յաջողած էր իբրև Մելիք-Շահնագար ներկայանալ Իբրահիմ ճրտ-խանին՝ շնորհիվ Պըլը-Պուղուն, ուր ներկա եղած էր և Բարայել ճրտ կաթողիկոսն» (Բեկնագարեանց 1886, 101): Նամակից պարզվում է, որ Գանձակի Ջավադ խանը, դաշնադրություն կապելով Թիֆլիս գնացող հայ մելիքների հետ, նպատակ ունի Գանձասարի Մարգիս Ջալալյան եպիսկոպոսին Գանձակ տեղափոխել և մելիքների վերադառնալուն պես նրան քաղաքում կաթողիկոս օձել տալ՝ ի հակառակ Ամարասի Բարայել Գաթողիկոսի: Նամակում անհանգստություն է հայտնվում Ղարաբաղի հայ ժողովրդի՝ «յուր սիրական մելիքների և կաթողիկոսի հետ անանջատ սրտով» կապվածության մասին, ինչն էլ փլուզելու նպատակով՝ խորհուրդը ընդունում է հինգ կետից բաղկացած մի ստոր որոշում. մահադեղով սպանել Մարգիս Եպիսկոպոսին և նրա հետ Ջալալեան ազգի կաթողիկոսությունը, Մելիք-Աբովին և Մելիք-Մեծլումին, որոնք չէին հպատակվում Իբրահիմին, նույն ճանապարհով ուղարկել «վերին աշխարհ», Մյուլքի-բեկին հազար թումանով կաշառել և նրա ձեռքով սպանել տալ Ազրայել-Իբրահիմին (Իբրահիմ Բեկնագարեանց-Թ.Հ.), որն ի դերն է հանում խանական բոլոր ձեռնարկությունները, բռնագրավել Գանձասարի գաղտնի փաստաթղթերը և թանկագին անոթները, ինչպես նաև Գյուլիստանի և Ջրաբերդի ժողովրդի կեսը տեղափոխել Վարանդա և Դիզակ՝ նշված նախորդ գավառների ուժը տկարացնելու հեռատեսությամբ:

Հետաքրքիր է նկատել, որ Մարգիս սրբազանի թունավորումն ի կատար ածելու պարտականությունը դրվում է Բարայել ճրտ կաթողիկոսի վրա, իսկ Իբրահիմ Բեկնագարյանցի սպանությունը՝ Շեյթանի վրա, որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Պըլ Պուղու օգնությամբ Մելիք-Շահնագարի «շոր մտած» Շեյթան Թունին, ով, Իբրահիմի գաղտնի հրամանները ջրի երես հանելով, տեղեկացնում է Ղարաբաղի գորախմբերի հրամանատարներին, որպեսզի կարողանան կանխել քաղաքական հանցավոր դավերը (Բեկնագարեանց 1886, 101-105):

Ղարաբաղի բանահյուսական կենցաղում զվարճապատումներ են հյուսվել նաև Պըլ Պուղու և Արցախում շատ սիրված մեկ այլ զվարճախոսի՝ Տմբլաչի Խաչանի շուրջը, ով ժամանակագրորեն հաջորդել է Պըլ Պուղուն: Այսպես, ըստ Բերդաշենում (Մարտունու շրջան) գրառված մի զվարճապատման, Պըլ Պուղին դիմում է Խաչանին՝ գուռնան փոխ վերցնելու խնդրանքով.

–Խաչան, տիյեր աստուծ, տըվեր տու, սօր ուրուգուն գուռնատ փոխ տո ինձ:

Խաչանը կարծելով, թե Պուղին ուզում է նվազել սովորել, հարցնում է.

–Պուղին ապրած կենա, հանցա օգում ըս ածել սըվերի ս:

–Չէ՛, չէ՛, չէ՛, ես քե մատաղ, օգում ըմ թաք մին քըշեր անջուկըս դինջ քոն ինիմ (Հայրապետյան 1991, 52):

¹ «Այսպես կոչում էին Ղարաբաղի այն մելիքներին, որ բաժանված էին հարազատ մելիքների միաբանությունից և միացած էին նրանց թշնամի թուրք խաների՝ հետ, որոնք բռնությամբ տիրապետել էին Շուշիին և Ղարաբաղի մի մասը» (Լաֆֆի 1959, 424):

Պըլ Պուդին իր ժամանակի որոշակի սոցիալական, կրոնական, քաղաքական գաղափարների կրողն է և իբրև երգիծական կերպար բացահայտվում է անսպասելի իրավիճակներում :

Մի օր Պըլ Պուդին գյուղամեջ է դուրս գալիս՝ արխալուղը ծածկված «թագա» չթի բազմաթիվ կարկատաններով:

–Պուդի՛, խըլեղըս տեղ-տեղ շընհավեր ինի,- հեզնում է Մելիք-Շահնազարը:

–Օրումաչ ապրիս, Մելիք,- պատասխանում է Պուդին (Հայրապետյան 1999, 60):

Քաղաքական կարևոր հարցերի քննության նպատակով Պարսկաստան ուղարկված ծաղրածու Պըլ Պուդու արտաքին տեսքը, հագուստ-կապուստը վատահոնություն չի ներշնչում մեր հարևաններին, և երբ նրանք տարակուսած հարցնում են, թե Ղարաբաղում մի կարգին մարդ չկար, որ Պարսկաստան ուղարկեին, Պըլ Պուդին սառնասրտորեն պատասխանում է, թե՛ կա, ինի՞ չի կա: Բայց Ղարաբաղում կարգին մարդուն կարգին մարդկանց մոտ են ուղարկում (Հայրապետյան 2015, 41): Պըլ Պուդին մահացել է 1810 թվականին՝ իր կտակի համաձայն թաղվելով Շոշ և Արկաթալու գյուղերի միջև ընկած քարայրում, որը հետագայում կոչվել է Պուդուն Կարան (Պըլը-Պուդի 1883, Գ, Գրիգորյան-Սպանդարյան 1971, 377):

Պըլ Պուդու զվարճապատումները, փոխանցվելով սերնդեսերունդ, ձևավորել են արցախահայության վարքային համալիրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս սփռելով XVIII դարի երկրորդ կեսերից մինչև XIX-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում Արցախ պատմաագագաքական շրջանի սոցիալ-քաղաքական հարաբերությունների և ազգամշակութային իրողությունների վրա:

Պըլ Պուդու անվան շուրջը հորինված կամ նրան վերագրվող ժողովրդի մեջ տարածված շատ զվարճապատումներ իրական հիմքեր ունեն, որոնցից հորդող լիաթոք ծիծաղը այսօր էլ նպաստում է աշխարհաքաղաքական աղերսների հիմքով ստեղծված նորանոր իմաստությունների հարակցումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ապրես Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, Տպարան Ի.Սկորոխոդովի, 406 էջ:
2. Գրիգորյան-Սպանդարյան Մ., Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 377 էջ:
3. Հայրապետյան Թ., անձնական գրառում, Արցախ, տետր № 2, 1991թ., Արցախ, տետր № 1, 1999 թ., Արցախ, տետր № 2, 2015թ.:
4. Ղազիյան Ա., Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուդին // Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, №9, էջ 60-69:
5. Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Բ. Պ. Կոստիկյանի, Երևան, 2000, «Զանգակ-97» հրատարակչություն, 321 էջ + 40 էջ (հավելված):
6. Շերմազանյան Գ., Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր, մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878, տպ. Հովի. Մարտիրոսյանցի, 198 էջ:
7. Պըլը-Պուդի, գրեց Մ. Վ. Բարխուդարեանց, Թիֆլիս, 1883, Վարդանեան և ընկ. տպարան, 190 էջ:
8. Դաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ, Երևան, 1959, Հայպետհրատ, 710 էջ:
9. Герхард М., Искусство повествования, Литературное исследование 1001 ночи, Москва, 1984, «Наука», 453 с.
10. Мирза-Адигезаль-Бек, Карабаг-Наме, Баку, 1950, изд-во Академии наук Азербайджанской ССР, 160 с.